կանֆլիկտայնությունն ու սխեմատիզմը՝ պոեմի ժանրում, ատաֆնաբար հաղթահարվում են. ավելի ու ավելի է խորանում պոեզիայի հոգեբանական-խոհական բովանդակությունը։ «Իհարկե,—գրում է հեղինակը,—եռպատերազմյան առաջին տարիներին, ի հակադրություն պարադայիալ ներբողների, ստեղծվեցին նաև խոր մարդկայնությամբ հագեցված բանաստեղծություններ, որոնց մեջ արտահայտվում են հայ ժողովրդի զգացմունքներն ու խոհերը։ Գրականության զարգացման պրոցեսը տեղի էր ունենում հակադիր տենդենցների ներքին պայքարի ձևով։ Այն ամենը, ինչ առողջ էր, կենսական ու ճշմարտացի, պոեզիայի մեջ զարգացման նոր հորիզոններ ձեռք բերեց 1953—1956 թթ. հետո, երբ պոեզիայի գերիշխող հատկանիշները դարձան քնարերգության ակտիվացումը, ինտելեկտուալ մակարդակի բարձրացումը, հուզական կողմի հարստացումը։ Պոեզիայի նոր ծաղկումը նախապատրաստվում էր նաև եռպատերազմյան առաջին շրջանում ստեղծված լավագույն բանաստեղծություններով»։ Այս գլխում հեղինակը կանգ է առնում Ե. Չարյանի, Գ. Սարյանի, Հ. Թիրագի, Հ. Մահյանի, Գ. Էմինի, Մ. Կապուտիկյանի, Պ. Սևակի, Մ. Մարգարյանի, Հր. Հովհաննիսյանի և սովետահայ մյուս պոետների ստեղծագործության վրա, ցույց տալով նրանց էվոլյուցիայի մի քանի կողմերն ու յուրահատկությունները։

Գրքի վերջում հեղինակը համառոտակի խոսում է եռպատերազմյան տարիների սովետահայ դրամատուրգիայի մասին, նշելով այս ասպարեզում ձեռք բերված հաջողությունները, ինչպես նաև ընդհանուր բնույթի մի քանի թերություններ, որոնց ստեղծագործական հաղթահարումը այդ ժանրի հետագա զարգացման, խորացման ու կատարելագործման կարևոր գրավականներից մեկն է։

«Սովետահայ գրականություն (1941—1960)» գիրքը Ս. Սարյանի մոտ տասը տարվա աշխատանքի արդյունքն է, որը վաղամեռիկ գրականագետի վերջին խոսքը եղավ։

Հ. ՄԱՆՈՒԿՅԱՆ

Проблемы современной Турции. Издательство Восточной литературы, М., 1963, 219 стр., цена 70 коп.

Ժամանակակից Թուրքիայի պրոբլեմները, Արևելյան գրականության հրատարակչություն, Մոսկվա, 1963, 219 էջ, գինը 70 կոպ.

Արևելյան գրականության հրատարակչությունը վերջերս լույս ընծայեց «Ժամանակակից Թուրքիայի պրոբլեմները» խորագրով ժողովածուն, որտեղ զետեղված հոդվածները ընդգրկում են ներկայիս Թուրքիայի ներքին կյանքի գրեթե բոլոր բնագավառները։ Երբն արժեքավոր է նրանով, որ հեղինակները փաստական նոր նյութի հիման վրա լուսաբանում են գերազանցապես վերջին շրջանի իրադարձությունները՝ 1960 թ. պետական հեղաշրջումը, 1961 թ. սահմանադրության ընդունումը, Թուրքական նոր կառավարության քաղաքականությունը հողային, բանվորական, ազգային հարցերում և այլն։

Հետաքրքրական է Ա. Պ. Բազիյանցի հոդվածը, որը նվիրված է 1960 թ. մայիսի 27-ին Թուրքիայում տեղի ունեցած պետական հեղաշրջման պատճառների քննությանը։ Հեղինակը փաստերով ցույց է տալիս, որ այդ հեղաշրջումը հետևանք էր երկար տարիների ընթացքում երկրում առկա տնտեսական ու քաղաքական ճգնաժամի, որն իր հերթին սրվում ու խորանում էր ոս.զմամոլ շրջանների կողմից տարվող քաղաքականությամբ։ Թուրքիան խաղաղ պայմաններում կես միլիոնանոց զորք է պահում (ՆԱՏՕ-ի բանակների մեջ երրորդը՝ ԱՄՆ-ից ու Ֆրանսիայից հետո), ամենագործուն մասնակցությունն ունենում ագրեսիվ ռազմական խմբավորումներում։ Բայար-Մենդերեսի կլիկի 10-ամյա տիրապետության հետևանքով Թուրքիան ֆինանսական ճգնաժամի եզրին էր կանգնած։ Դեմոկրատական կուսակցության գլխավորած կառավարությունը, նշում է հեղինակը, չկարողացավ լուծել ներքին տնտեսական ու քաղաքական և ոչ մի պրոբլեմ, ինչպես և արտաքին քաղաքականության բնագավառում ծառացած խնդիրները։ Ուստի և զինվորականությունը որոշեց պետական հեղաշրջման միջոցով իշխանությունից հեռացնել սնանկացած քաղաքագետներին՝ սոցիալական բախումներն ու քաղաքացիական պատերազմը երկրում կանխելու համար։ Միանգամայն հիմնավորված պետք է համարել հեղինակի այն եզրակացությունը, թե գոյություն ունեցող սոցիալական կարգերն ու պրոիմպերիալիստական կողմնորոշումը անսասան թողնելու ձգտումն էր, որ միավորեց հե-

դաշրջումից հետո իշխանության գլուխ անցած ուժերին։

Գ. Գ. Մոիսեևի ծավալուն հոդվածում («Քեմալ Գյուրսելի կառավարության տնտեսական քաղաքականությունը») վերլուծվում են այն միջոցառումները, որոնք ձեռնարկվել են հիշյալ կառավարության կողմից 1960 թ. մայիսյան հեղաշրջումից մինչև 1961 թ. նոյեմբերը (Ազգային միասնության կոմիտեի պաշտոնական ցրումը և Իսմեթ Ինոնյուի կոալիցիոն կառավարության կազմվելը) ընկած ժամանակահատվածում։ Հեղինակը հանգամանորեն կանգ է առնում հողային հարցի վրա, որի էությունը, թուրք ժուռնալիստ Ալի Քենանի արտահայտությամբ՝ կայանում էր նրանում, որ «ֆեոդալիզմը ոչնչացվի ամբողջ Թուրքիայում՝ անկախ այն բանից, գա արևմտյա՞ն, թե արևելյան Անատոլիան է»։ Հոդվածագիրը ցույց է տալիս, որ Թուրքիայի նոր կառավարողներն էլ ի վիճակի չեն լուծելու այդ կենսական հարցը։ 1961 թ. ամռանը Հիմնադիր ժողովին ներկայացված ագրարային ռեֆորմի օրինագիծը սոսկ 1945 թ. ագրարային ռեֆորմի վերաբերյալ ընդունված օրենքի վատթարացած մի տարատեսակն էր։ Հոդվածում բերված են ուշադրավ փաստեր, այսպես կոչված՝ օտարերկրյա օգնության մասին։ Ահա ինչ էր գրում այդ առթիվ Ստամբուլում լույս տեսնող «Վաթան» թերթը 1961 թ. գեկտեմբերի 14-ին. «10-ամյա օտարերկրյա օգնությունը բաղկացած է տրակտորների գերեզմանոցից, ամերիկյան բանակի հնացած զենքից, ինչպես նաև պահեստներում փտող հացահատիկից, որը կառավարությունը գնում էր ամերիկյան ֆերմերներին աջակցելու համար» (էջ 52)։ Թուրքիայի նոր ղեկավարները, սակայն, ոչ միայն չհրաժարվեցին այդպիսի «օգնությունից», որը պարտավորեցնում էր երկիրը ծառայեցնել ագրեսիվ նպատակներին, այլև վերստին հաստատեցին իրենց նվիրվածությունը պրոիմպերիալիստական արտաքին քաղաքական գծին։ Այդ էր պատճառը, որ ամերիկյան մոնոպոլիաները ուժեղացրին իրենց ռազմական «օգնությունը» Թուրքիային, որը 1961 թ. վերջին 1960 թ. մայիսի համեմատությամբ աճեց 842 միլիոն գոլարով։ Այլ կերպ ասած՝ Թուրքիան յուրաքանչյուր ամիս ԱՄՆ-ից ստանում էր 45 մլն դոլար ռազմական ու տնտեսական «օգնություն», այսինքն կրկնակի չափով ավելի, քան Մենդերեսի ժամանակներում (էջ 53—54)։ Գյուրսելի տնտեսական քաղաքականության վերլուծության հիման վրա հոդվածագիրը հանգում է հետևյալ եզրակացության. «Այն պատճառները, որոնք հասցրին Բայար-Մենդերեսի ռեժիմի տապալմանը, տակավին շարունակում են գոյություն ունենալ» (էջ 56)։

«Թուրքիայի՝ Քեմալ Աթաթյուրքի արտաքին քաղաքականությանը վերադառնալու հարցի շուրջը» խորագրով հոդվածում Ա. Մ. Շամսուտդինովը հայտնում է այն տեսակետը, թե Թուրքիան կկարողանա պահպանել իր անկախությունը և կարևոր դեր խաղալ միջազգային կյանքում, եթե նրա ղեկավար շրջանները «վերականգնեն» թուրքական հանրապետության առաջին պրեզիդենտ Քեմալ Աթաթյուրքի արտաքին քաղաքական սկզբունքները։ Հեղինակը փաստերով ցույց է տալիս, որ այն տարիներին, երբ Թուրքիան չէր մասնակցում իմպերիալիստական տերությունների ագրեսիվ ձեռնարկումներին և պաշտպանում էր Սովետական Միության խաղաղասիրական քայլերը, նրա հեղինակությունը միջազգային ասպարեզում զգալիորեն աճել էր։ Այս բոլորը անվիճելի է։ Ճշմարիտ է նաև, որ նախապատերազմյան ժամանակաշրջանում, մասնավորապես 1925—34 թթ., ՍՍՌՄ-ի ու Թուրքիայի միջև գոյություն է ունեցել համագործակցություն միջազգային որոշ հարցերում, ինչպես և տնտեսական ու կուլտուրական բնագավառներում, որից Թուրքիան մեծապես շահել է։ Սակայն դժվար է համաձայնվել հեղինակի այն պնդման հետ, որ իբր միայն «40-ական թվականներին, Քեմալ Աթաթյուրքի մահից հետո (1938), հետադիմական ուժերի ճնշման ներքո Թուրքիայի պետական գործիչները փոխեցին արտաքին քաղաքական կուրսը» (էջ 60)։ Մինչդեռ հայտնի է, որ Թուրքիան տակավին հակաիմպերիալիստական իր պայքարի շրջանում թշնամական գործողություններ էր ձեռնարկում երիտասարդ Սովետական Ռուսաստանի դեմ. 1920 թ. թուրքական արշավանքն Անդրկովկաս հակասովետական բնույթ էր կրում։ Այդ առթիվ Վ. Ի. Լենինը 1920 թ. դեկտեմբերի 21-ին ունեցած իր ելույթում նշում էր. «Թուրքական հարձակումը ուղղված էր մեր դեմ... Թուրքիայում իշխանության գլուխ են կանգնած կադետները, օկտյաբրիստները, նացիոնալիստները, որոնք պատրաստ են մեզ ծախել Անտանտին»[1]։ 30-ական թվականներին, Թուրքիան եռանդուն մասնակցություն ունեցավ ֆրանսիական իմպերիալիստների կողմից ոգեշնչված Բալկանյան պակտի ստեղծմանը (1934), ստորագրեց հակասովետական ուղղվածություն ունեցող Սաադաբադի պակտը (1937)։ 1936 թ. Մոնտրեի կոնֆերանսում Թուրքիան ՍՍՌՄ-ի նկատմամբ թշնամա-

[1] В. И. Ленин, Заключительное слово по докладу о концессиях на фракции РКП(б) VIII съезда Советов 21 декабря 1920 г., журнал „Коммунист", 1963 г., № 6, էջ

կան դիրք էր բռնել, որի հետևանքով նեղուցների վերաբերյալ ընդունված կոնվենցիան օտարերկրյա ռազմանավերին հնարավորություն էր տալիս անցնել նեղուցներով դեպի Սև ծովը։

Դրախոսվող ժողովածուի ուշագրավ նյութերից է Ս. Ա. Հասրաթյանի հոդվածը, որը նվիրված է ազգային հարցում Թուրքիայի կառավարող շրջանների վարած քաղաքականության վերլուծությանը։ Մեջ բերելով փաստական հարուստ նյութ ինչպես թուրքական մամուլից, այնպես էլ եվրոպական աղբյուրներից ու գրականությունից, հեղինակը մերկացնում է թուրքական կառավարության շովինիստական քաղաքականությունը երկրում բնակվող ազգային փոքրամասնությունների նկատմամբ, ցույց տալիս, որ նման քաղաքականությունը «ժառանգական բնույթ ունի»։ Այսպես, օրինակ, Քեմալի կողմից ստեղծված ժողովրդա-հանրապետական կուսակցության գլխավոր քարտուղար Ռեջեփ Փեքերը 1931 թ. արտասանած իր ճառում, պարզաբանելով հիշյալ կուսակցության ծրագրի հիմնական կետերից մեկը հանդիսացող «ենացիոնալիզմի» սկզբունքը, ասել է հետևյալը. «Անհրաժեշտ է մեր հայրենակից քրիստոնյաներին ու հրեաներին ամենայն անկեղծությամբ հայտնել մեր կարծիքը։ Մեր կուսակցությունը այդ քաղաքացիներին ես (քրդերի, չերքեզների և մահմեդական այլ ժողովուրդների հետ մեկտեղ—Ռ. Ս.) դիտում է... որպես անկասկած Թուրքերի»։ Կառավարության ասիմիլյատորական քաղաքականությունը արդարացնելու նպատակով նա պնդում էր, որ «ժամանակակից իրականությունը չի երաշխավորում 5—10 հազար, մի քանի հարյուր հազար, կամ նույնիսկ 1 միլիոն հոգուց բաղկացած ժողովրդի անկախ գոյությունը» („Milliyet", 17.X. 1931)։ Մեջ բերելով այս հատկանշական փաստը, հոդվածագիրը ցույց է տալիս, որ Թուրքիայի կառավարող շրջանները լսել անգամ չէին ուզում երկրում բնակվող ազգային փոքրամասնությունների կողմից իրենց ազգային մարզերը ստեղծելու մասին՝ նույնիսկ թուրքական պետականության շրջանակներում (էջ 135)։ Մերկացնելով այդ կարգի մոտեցումների շովինիստական էությունը, Վ. Ի. Լենինը մի այլ առիթով գրում էր. «Ինչո՞ւ չեն կարող ավտոնոմ ազգային օկրուգներ լինել ոչ միայն կես միլիոն, այլև նույնիսկ 50 հազար բնակչությամբ...»[2]։

Պաշտոնական մարդահամարների տվյալների համաձայն Թուրքիայում բնակվում են ավելի քան 25 ազգությունների ներկայացուցիչներ։ Իհարկե, պաշտոնական վիճակագրությունը չի կարող տալ երկրի ազգային կազմի իրական պատկերը, քանի որ մարդահամարի թերթիկներում ազգային պատկանելիության վերաբերյալ կետը իսպառ բացակայում է, այն փոխարինված է մայրենի լեզվին վերաբերող կետով։ Այստեղից հասկանալի է, որ Թուրքիայում բնակվող ազգությունների ընդհանուր թիվն անհամեմատ ավելի մեծ է, քան ներկայացվում է պաշտոնական տվյալներով (2,5 մլն)։ Հեղինակն այդ առթիվ մեջ է բերում հետևյալ ուշագրավ փաստերը. 1927 թ. մարդահամարով տոգային փոքրամասնությունները Ստամբուլի վիլայեթում կազմում էին 27,45 տոկոս, իսկ ոչ-մահմեդականները՝ 31,14 տոկոս։ Հետևաբար հիշյալ վիլայեթի ոչ-մահմեդական ազգաբնակչության 3,69 տոկոսը, երկյուղ կրելով հալածանքներից ու հետապնդումներից, իր մայրենի լեզուն համարել էր թուրքերենը։ Հեղինակի հաշվումների համաձայն, միայն Ստամբուլի վիլայեթում այդ ձևով թուրք ազգության շարքն էին գասվել 21.250 այլազգիներ (էջ 129), որոնց մի զգալի մասը, հավանաբար, հայեր են եղել։ Մի այլ հետաքրքիր փաստ. 1955 թ. մարդահամարի տվյալներով լուսավորչականների թիվը Թուրքիայում կազմում էր 55.403 մտրգ, որոնցից 18.788 հոգի որպես մայրենի լեզու էին ճանաչել կա՛մ թուրքերենը, կա՛մ քրդերենը, կա՛մ էլ հունարենը, թեև լուսավորչական կրոնը դավանում են, որպես կանոն, միայն հայերը։ Հեղինակն իրավացիորեն եզրակացնում է, որ Թուրքիայում բնակվում են ոչ թե 47 հազար հայեր, ինչպես վկայում են պաշտոնական տվյալները (լեղվի հատկանիշից ելնելով), այլ 18 հազարով ավելի, այսինքն՝ 65 հազար (էջ 130)[3]։ Այս և ուրիշ տվյալների հի-

---

2 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 20, էջ 44։

Հեղինակն այդ թիվն էլ ճշգրիտ ու վերջնական չի համարում։ Նա նշում է, որ սփյուռքահայ մամուլի հաշվումներով Թուրքիայում բնակվող հայ ազգաբնակչության թիվը հասնում է 116 հազարի։ «Նոր օր» թերթն, օրինակ, գրտնում է, որ Արևմտյան Հայաստանում ներկայումս բնակվում են 40 հազար հայեր, որոնցից միայն 2000 հոգի հայերեն կարդալ-գրել գիտեն (էջ 130)։

Ի գեպ նշենք, որ օտար հեղինակները ես գտնում են, թե հայերի թիվը Թուրքիայում հարյուր հազարից ավելի է։ Այսպես, ամերիկյան պրոֆ. Էլեոնորա Բիսբին, որը երկար տարիներ պատմություն է ավանդել Ստամբուլի «Ռոբերտ կոլեջում», այն կարծիքն է հայտնում, որ Թուրքիայում կան 102 հազար հայեր, որոնց գերակշռող մեծամասնությունը բնակվում է Ստամբուլում և նրա շրջակայքում (տե՛ս Bisbee

ման վրա հեղինակը այն կարծիքն է հայանում, որ ազգային փոքրամասնությունները ներկայումս կազմում են երկրի ազգաբնակչության չուրջ 20 տոկոսը. այսինքն՝ մոտ 5—6 մլն մարդ (պաշտոնական տվյալներով Թուրքիայի ազգաբնակչության թիվը հասնում է 30 միլիոնի)։ Թուրքիայի կառավարող շրջանները չեն ուզում ճանաչել ազգային այդ փոքրամասնություններին և բնդհանրապես ազգային հարցի առկա ուությունը։ Բացի երկրում բնակվող Թուրքալեզու տարբեր բեգերից ու ժողովուրդներից, նրանք Թուրքերի շարքն են դասում նաև ազգային փոքրամասնությունների մյուս ներկայացուցիչներին։ Հոդվածագիրը այդ բանը հաստատող բազմաթիվ օրինակներ է բերում։ Այսպես, քաղաքացիության մասին օրենքը (№ 1312) երկրում ոչ-Թուրքից ծնված բոլոր քաղաքացիներին համարում է Թուրքեր, իսկ 1961 թ. ընդունված նոր սահմանադրության 54-րդ հոդվածի համաձայն Թուրքիայի բոլոր քաղաքացիները համարվում են Թուրքեր (էջ 132)։ Ազգային փոքրամասնությունների գոյությունն անտեսելու, նրանք չճանաչելու մասին են վկայում նաև օրենսդրական այլ ակտերը։ Այսպես, 1924 թ. սահմանադրության 2-րդ հոդվածում ասվում էր, որ «պետական լեզու է համարվում Թուրքերենը։ Ջինվորական հեղաշրջումից հետո՝ 1961 թ. ընդունված սահմանադրության մեջ «պետականա բառը փոխարինվել է «պաշտոնականա բառով (հոդված 3), որը, սակայն, չի փոխում էությունը՝ Թուրքերեն լեզուն բռնի կերպով պարտադրում են ազգային փոքրամասնություններին, արհամարհելով վերջիններիս տարրական իրավունքները։ Հոդվածի հեղինակը փաստերով ցույց է տալիս, որ այս չարցում Թուրքիայի ներկայիս գեկավարները ոչնչով չեն դիջում իրենց նախորդներին։ Այսպես, Ջեմալ Գյուրսելը, 1960 թ. հոկտեմբերի 24-ին ելույթ ունենալով Դիարբեքիրում, քրդական հարցի կապակցությամբ ասել է. «Քրդեր չկա՞ն, բոլորը Թուրքեր են... ոչ միայն այստեղ (Դիարբեքիրում—Ռ. Ս.), այլև արևելյան բոլոր վիլայեթներում միայն Թուրքեր են բնակվում» (էջ 141)։ Նույն բանն է կրկնում Թուրքական մամուլը։ «Ենի գյունա Թերքը 1960 թ. հոկտեմբերի 28-ին գրում էր. «Մենք ոչ որի չգիտենք, որը թուրգ կոչվեր։ Թուրքական հանրապետության բոլոր քաղաքացիները Թուրքեր են» (էջ 141)։ 1960 թ. պետական հեղաշրջումից հետո Թուրք երիտասարդության շրջանում ազգայնական մի շարժում սկսվեց, որի նպատակն էր ազգային փոքրամասնությունների բոլոր ներկայացուցիչներին ստիպել խոսել միայն Թուրքերեն։ Բանն այնպես հասավ, որ Ստամբուլի ուսանողները, օրինակ, անցորդներին ու քաղաքային տրանսպորտի ուղևորներին փորձում էին արգելել իրենց մայրենի լեզվով խոսել։ Այդ նույն օրերին Թզթակիցների հետ ունեցած զրույցի ժամանակ Ստամբուլի զինվորական նահանգապետ գեներալ Ռեֆիկ Թուլգան հայտարարել էր. «Մենք կցանկանայինք, որ այն անձինք, որոնք խոսում են ոչ-Թուրքերեն, հարգեին ազգական սովորույթները և իրենք խոսակցություններով չձանձրացնեին շրջապատի մարդկանց... պետք է բոլորին ստիպել խոսել Թուրքերեն» (էջ 141)։

«Թուրքիայում հաստատված բուրժուա-կալվածատիրական դիկտատուրայի պայմաններ,—գրում է վերջում հոդվածի հեղինակը,—ազգային փոքրամասնությունների՝ քրդերի, հայերի, հույների և մյուսների բռնի ճնշման պայմաններն է։ Սակայն այդպիսի քաղաքականությունը վիրավորում է ազգային փոքրամասնությունների արժանապատվությունը, ուժեղացնում նրանց ազատագրական ձգտումները, առանձնություն առաջ բերում Թուրք ասիմիլյատորների նկատմամբ» (էջ 144)։

Հիշյալ հոդվածի ընթերցումից հետո տարօրինակ է թվում, որ գրախոսվող գրքում գեպեզված «1961 թ. սահմանադրության մասին» հոդվածում հեղինակները (Լ. Ա. Օրնատսկայա, Ա. Մալախովսկի) Թուրքիան բազմազգ պետություն չեն համարում։ Թուրքիայում երկպալատյա սիստեմ (ազգային պալատ և սենատ) բնդունելը առաջադիմական երևույթ չգիտելով, նրանք այդ առնչությամբ գրում են հետևյալը. «Այդպիսի մարմինն անհրաժեշտ է բազմազգ կամ ֆեդերատիվ ու կոնֆեդերատիվ պետություններում։ Առաջին դեպքում նրա մեջ կմրանեին ազգությունների ներկայացուցիչները, երկրորդ դեպքում՝ պետության մեջ գոյություն ունեցող մարզերի ներկայացուցիչները» (էջ 116, ընդգծումը մերն է—Ռ. Ս.)։ Մեզ համար անհասկանալի է, թե ինչու հեղինակները 25 ազգություններից բաղկացած պետություն՝ Թուրքիան հնարավոր չեն գտնում դասելու բազմազգ պետությունների շարքը։ Ընդհանուր առմամբ, հոդվածն արժեքավոր է. հեղինակներին հաջողվել է ցույց տալ, որ 1961 թ. հուլիսի 9-ի սահմանադրությունը (որը թվով 3-րդն է՝ 1876 թ. և 1924 թ. սահմանադրություններից հետո) երկրի աշխատավոր զանգվածներին չտվեց դեմոկրատական այն ազատությունները, որ նրանք հույս ունեին ստանալ Մենդերեսի կառավարության անկումից հետո։ Ճիշտ է, Թուրքիայի պատմության մեջ առաջին անգամ սահմանա-

Eleanor, The New Turks, Pionneers of the Republic 1920—1950. Philadelphia, 1951, էջ 101)։

գրությունը հանձնում է գործադուլի և վճարովի արձակուրդի իրավունքը, սակայն 1961 թ. սահմանադրության բեղուեռումից հետո անցած տարիները վկայում են, որ իր ժամանակին ստիպված լինելով նման զիջումներ անել, կառավարությունը ամենևին մտադիր չէ հետևելու նոր սահմանադրությանը։ Ուշագրավ է գրավում սահմանադրության 66-րդ հոդվածը, որով, ինչպես նշում են հեղինակները, «Դյուրանցի կառավարությունը նույնիսկ սահմանադրության մեջ ցանկացավ հայտարարել, որ Թուրքիան պահպանելու է իր հավատարմությունը ամերիկա-անգլիական իմպերիալիստների կողմից ստեղծված ագրեսիվ-ռազմական բլոկներին» (էջ 117)։

Թուրքիայի բանվոր դասակարգի և նրա պրոֆմիությունների վիճակի մասին փաստական հարուստ տվյալներ է պարունակում Ռ. Գ. Կոռնիենկոյի հոդվածը։ Բերված նյութերից երևում է, որ 1960 թ. մայիսյան հեղաշրջումից հետո իշխանության գլուխ անցած ուժերն է, ոչինչ չավին բանվոր դասակարգին, չթնթեցրին նրա թշվառ գոյության պայմանները։ Դեռ ավելին. նոր կառավարության օրոք գործադրությունն ավելի լայն չափեր ընդունեց։ 1962 թ. մայիսի 3-ին հազարավոր թուրք գործադուրկներ բոզորի ցույց կազմակերպեցին։ Նրանց հաջողվեց հասնել մինչև մեջլիսի շենքը և իրենց ներկայացուցիչներին ուղարկել նիստերի դահլիճը՝ պատգամավորների հետ բանակցություններ վարելու համար։ Բանվորներից մեկը, գիմելով սենատոր Նախագահին, ասաց. «... Մեջլիսը հավաքվում է. նիստեր գումարում, սակայն ի՞նչ ժողովներ են դրանք։ Դրանք նվիրված են Մենդերեսի ռեժիմի գաստապարված կուզմնակիցներին։ Մի՞թե բացի ամենատիայից դուք ուրիշ գործ չունեք... մի՞թե չկան գործեր, որոնք կապված են բանվոր դասակարգի հետ» (էջ 89)։ Հոդվածի վերջում հեղինակն իրավացիորեն նշում է, որ «հակակոմունիզմը Թուրքիայում բարձրացվել է պետական քաղաքականության մակարդակին» (էջ 93)։

Գրքում զետեղված են նաև Գ. Մոխանի և Բ. Կարաբաևի «Դյուզացիական շարժումը Թուրքիայում երկրորդ համաշխարհային պատերազմից հետո», Մ. Ե. Վիշնյակովի «Թուրքիայի նավթարդյունաբերության հարցի շուրջը», Ե. Ի. Ուրազովայի «Թուրքիայի արդյունաբերական զարգացման պրոբլեմը և օտարերկրյա կապիտալը» և Վ. Ի. Դանիլովի «Թուրքիայի ներքին պրոբլեմների և Ազգային միասնության կոմիտեի գործունեության լուսաբանումը «Նորում» հանդեսում (1960 թ. մայիս—1961 թ. հոկտեմբեր)» հոդվածները։

Ժողովածուում ապագրված է երկու հազարդում, Ագրբեջանի գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս Ա. Ա. Ալիզադեի հազարդումը նվիրված է 1961 թ. հոկտեմբերի 20—26-ը Անկարայում գումարված «Թուրքիայի պատմության բեկերության» (Türk Tarih Kurumu) 6-րդ կոնգրեսին։ Հեղինակը անդրադառնում է, որ կոնգրեսի աշխատանքներն բնթանում էին չորս սեկցիաներում. 1. Հին Անատոլիայի ու Առաջավոր Ասիայի պատմության, 2. Միջին Ասիայի ու մեծագարյան Թուրքիայի պատմության, 3. Օսմանյան պատմության, 4. Թուրքական հանրապետության ու հեղափոխության պատմության։

Ա. Գ. Բագիյանցի հազարդման մեջ համառոտակի բնութագրվում է 1962 թ. մայիսին Բարվում կայացած Համամիութենական գիտական նստաշրջանի՝ Թուրքիայի պատմության ու անտանության սեկցիայի աշխատանքը։

«Ժամանակակից Թուրքիայի պրոբլեմները» ժողովածուն ուշագրավ գործ է, այն կարդացվում է հետաքրքրությամբ։

Ռ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԳԻՊՈՐԻՍ ԱՂԲԱՄԱՐՅԱՆ. *Ռասամնասիրություն, քննական բնագրեր և ծանոթագրություններ Մատիա Ուվուրբեզյանի.* Հայկական ՍՍՌ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1963, 360 էջ, գին՝ 1 ռ. 20 կ.

Գրիգորիս Աղբամարյան տանգագործության ուսումնասիրությամբ շատ անվանի հայագետներ են զբաղվել, ամենից ավելի՝ Հանդուցյալ Ն. Ակինյանը, որի «Գրիգորիս և կամբոդիկոս Աղբամարյան մենագրությունը (Վիեննա, 1958 թ.) իր հարուստ մատենագրական տվյալներով, նյութի ամբողջական ընդգրկումով ու քննական բնագրերով՝ արժեքավոր ներդրում է հայագիտության մեջ։ Գրիգորիս Աղբամարյան մատենագրության նոր հրատարակությունը պատմատարանվում է Հիմնականում ամենաշին ձեռագրի ընդգրկմամբ և երկու երկրորդական համարված ձեռագրի («Պարտեն է բացվեր, սեմանվեն առաջուն և յոյս») ներառմամբ։

Մինչև բնագրերի նոր հրատարակությունը արժեքավորումը, անդրադառնանք գրքի «Գրիգորիս Աղբամարյան։ կյանքի ու տանգագործությունը» բաժնին (էջ 8—98), որ ինքնատիպ, նորությունների հետ հրատարակությունը